ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ

Նորք-Մարաշ վարչական շրջանի հարգելի՛ բնակիչներ,

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017 թվականին մեր վարչական շրջանում իրականացվեցին զգալի աշխատանքներ՝ ուղղված Նորք-Մարաշի զարգացմանն ու բարեկարգմանը: Այս հաշվետվությունը մանրամասնորեն ներկայացնում է կատարված աշխատանքներն ու դրանց արդյունքները:
Վարչական շրջանի ղեկավարությունը իր մշտական ուշադրության կենտրոնում է պահում բնակիչների խնդիրները, արձագանքում նրանց բարձրացրած հարցերին և փորձում հնարավորինս արագ լուծում տալ դրանց: Մեր բոլոր հաջողությունների հիմքում նաև այն սերտ համագործակցությունն է, որն այս տարիների ընթացքում ձևավորվել է բնակիչների և վարչական շրջանի ղեկավարության միջև: Այդ բաց ու անկեղծ համագործակցությունը մեծ արժեք է և հետագայում ևս շարունակվելու է:

Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար
Վաղինակ Մկրտչյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թվականին Նորք-Մարաշ վարչական շրջանում իրականացվել են ասֆալտապատման, եզրաքարերի վերանորոգման և հենապատերի կառուցման աշխատանքներ:

- Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում 2017 թվականի ընթացքում իրականացվել են փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ՝ **19500 քմ**:
- Երևան քաղաքի 2017թ. ծրագրով հիմնանորոգվել է «Երևանի հ.122 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի պարիսպը:
- Իրականացվել են Նորքի 2-րդ փողոցի վերջնամասից մինչև Հին Նորք **454 գծմ** նոր ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ:





ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. կառուցվել են խաղահրապարակներ, պուրակ, իրականացվել են բակային ենթակառուցվածքների ներկման և վերանորոգման աշխատանքներ:

- Նորքի 2-րդ փողոցի վերջնամասում իրականացվել են մինի ֆուտբոլի դաշտի կառուցման և նրա հարակից տարածքում նոր խաղահրապարակի նորոգման և բարեկարգման աշխատանքներ:
- Նախկինում կառուցված բակերի և խաղահրապարակների նորոգման աշխատանքներ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- Անցկացվել է **480** գծմ լուսավորության նոր ցանց՝ 14 լուսակետով:



2017 թ. սոցիալական ծրագրերը շարունակել են լինել վարչական շրջանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում:



Վարչական շրջանի 60 սոցիալապես անապահով երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի «Հեքիաթային կիրճ» ճամբարում

- Նորք-Մարաշ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կազմակերպվել են էքսկուրսիաներ:
- «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության շրջանակում Նորք-Մարաշ վարչական շրջանի **86** ընտանիքի հատկացվել է կենցաղային տեխնիկա:
- Նորք-Մարաշ վարչական շրջանում բնակվող.
  - **5** սոցիալապես անապահով միայնակ թոշակառուներ օգտվում են բարեգործական ճաշարանի ծառայությունից:
  - **60** սոցիալապես անապահով դպրոցահասակ երեխաների հատկացվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
  - **16** տարեցների համար 2017թ. ընթացքում 3 անգամ կազմակերպվել է մեկօրյա հանգիստ:
  - **650** ընտանիքի տրամադրվել են ամանորյա պարենային փաթեթներ:
  - Կազմակերպվել է Նորք-Մարաշ վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների **40** ծնողների այցելությունը զորամասեր:
  - Անապահով ընտանիքների **650** երեխաների տրամադրվել են ամանորյա նվեր-փաթեթներ:
  - Վարչական շրջանում բնակվող սիրիահայ ընտանիքները մշտապես ՎՇ աշխատակազմի ուշադրության կենտրոնում են:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2017 թ. զգալի և տեսանելի աշխատանք է կատարվել մանկապարտեզների վերանորոգման, գույքով համալրելու, միջազգային համագործակցության և սննդի որակի վերահսկման ուղղություններով:

- Նորք-Մարաշ վարչական շրջանի **4** մանկապարտեզներում կազմակերպվել է **377** երեխայի անվճար նախադպրոցական ուսուցում:

2017 թ. ակտիվացում է արձանագրվել վարչական շրջանի մշակութային կյանքում:

- Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց է հաճախում **185** երեխա:
- 2017 թվականի ընթացքում իրականացվել է ազգային, պետական, հոգևոր բոլոր տոներին նվիրված **22** միջոցառում

ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

2017 թվականին սպորտային հաստատություններն արձանագրել են սաների թվի աճ:

- 2017 թվականի ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանում կազմակերպվել է 12 սպորտային միջոցառում, մարզական բաց առաջնություններ, ընկերական հանդիպումներ, բակային առաջնություններ:
- «Նորք-Մարաշ մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ է հաճախում 264 երեխա 6 մարզաձևում:
- «Նորք-Մարաշ շախմատի դպրոց» ՀՈԱԿ անվճար հաճախում է 83 երեխա:
- Իրականացվել է Նորք-Մարաշ վարչական շրջանի մարզադպրոցի ընդլայնում և հիմնանորոգում:

2017 թ. վարչական շրջանում զգալի աշխատանք է կատարվել ոռոգման համակարգի վերանորոգման և կանաչապատման ուղղությամբ:

2017թ. Նորք-Մարաշ վարչական շրջանի ծաղկային տարածքը կազմել է 1.1 հա՝

- տնկվել է շուրջ 10000 ծաղիկ,
- տնկվել է շուրջ 100 ծառ և 200 թուփ,
- գարնանային և աշնանային աշխատանքների ընթացքում իրականացվել է շուրջ 110 ծառի խնամք և պահպանում:



ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թվականին ծավալուն աշխատանք է կատարվել վարչական շրջանի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման և ընդլայնման ուղղությամբ:

- Նորք-Մարաշ վարչական շրջանի և ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև համագործակցության ծրագրի շրջանակներում 2017 թվականի ընթացքում տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ, քննարկումներ, փորձի փոխանակում, սոցիալական, կրթական և մշակութային բազմազան ծրագրեր:

- Նորք-Մարաշ վարչական շրջանի և Տավուշի մարզի Տավուշ գյուղի միջև համագործակցության շրջանակներում իրականացվել են մի շարք սոցիալական ծրագրեր:



Մենք
հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-718
norq_marash@yerevan.am



www.yerevan.am